

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԱՒԱՍԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ.

Վերջերս գերմանական մի լրագիր — պարզ բան է, կենդանիների այն ցեղեց, որ իր տերի հարաձայնների տակ էլ չէ դադարում ազին խաղացնել — մէկ առանձին զոհութեան շնորհիվ շնորհաւորում է «քրիստոնեայ» մեծ պետութիւններին, որ այնպէս «աջող և արդարութեան պահանջի համաձայն վերջ դրին յունական խնդրին և առհասարակ Արևելեան տաղնապին»։ «Խաղաղութիւնը հաստատուեցաւ, ասում է լրագիրը, և եւրոպական պետութիւններն անխախտ կերպով ամրացրին թէ իրանց սեփական և թէ իրար մէջ ունեցած յարաբերութիւնների հիմունքները»։

Լրագիրը չէ սխալում։ Ղիպյոսմատական խորագրէ խորամանկութիւնները, մեծ պետութիւնների փոխադարձ ինտրիգները, նրանց փոխադարձ զինջումները, որոնք կատարւում էին ձիշդ այն բոլորին՝ երբ այդ զինջումն էլ կապւած էր կանխամտածւած մի յատակագծի իմաստի հետ, նրանց ջանքերն իրարու ոտքի տակից խլելու հիմք կազմող փտած տախտակներից մէկը, նրանց խարդաւաններն իրարու վրայ գցելու պատասխանատուութիւնները, — այդ բոլորի շնորհով նրանք պաշտպանեցին եւրոպական «հաւասարակշռութիւնը»։ Այդ նպատակի համար նրանք շատ կարկատաններ արին։ Օսմանեան կայսրութեան ամեն-մէկ անկիւնից փալատներ հաւաքեցին կարկատելու սուլթանի պատառոտւած սպիտակեղէնը՝ ծածկելու համար նրա զգւելի մերկութիւնը։ Հայի, Յոյի, Արէտացիի մարմնից ողջ-ողջ պատառեցին մտի ահագին պատառներ և կպցրին Թիւրքիայի մարմնի ամենանեխած տեղերը։ Ղիպյոսմատական շառլատանութեան մէջ վարժ վեց վերաբոյժներն այդ ազգերից քամեցին նրանց արիւնը, որ ներս սրսկեցին Թիւրքիայի հիւանդ ու արիւնքամ մարմնի մէջ՝ արեւստական կերպով երկարացնելու համար նրա անագորոյն, աւերիչ գոյութիւնը։

Քրիստոնեայ պետութիւններն, արդարեւ, քրիստոնեական ընթացք բռնեցին։ Հաւատարմով հանդերձեալ կեանքին, որը, նրանց ասելով, նահատակներին ու մարտիրոսներին պէտք է երանութիւն պարգևէ, նրանք թողին, այլ և նպաստե-

ցին քրիստոնեայ ժողովուրդների կոտորման։ Մանաւանդ որ այդ քրիստոնեական խոնարհութիւնը սուլթանական խեղացնոր կատաղութեան հողմի պայթման զիմաց՝ բոլորովին համապատասխանում էր եւրոպական հաւասարակշռութեան նպատակին։ Աւս առաւել մանաւանդ այն պատճառով, որ եւրոպական պատմութեան, կապիտալի անհանգուրժելի ու հրաշագործ հմայքը դնչակալ էր դնում եւրոպական հասարակութեան կողմից մերթնդ մերթ երեւան եկող ազնիւ զայրոյթի կրքերին, և եւրոպական կապիտալիստի խնամատար ձեռքը պալատների իւղ էր քսում օսմանեան տէրութեան մէջ գործող բանկային թղթերին՝ աւելի դիւրութեամբ նրանց սահեցնելու համար մի քանի տասնեակ կապիտալիստների ու դրանց տէրութիւնների զրպանները։

Աւ այդ բոլորի գնով եւրոպական հաւասարակշռութիւնը չը խախտուեցաւ, այլ և աւելի հաստատուեցաւ։ Աւ այդ բոլորի գնով Թիւրքիայի «ամբողջութիւնը» պահպանուեցաւ և մինչև իսկ Յունաստանի սրտից կտրած մի մասով աւելացաւ։ Բայց երկար ժամանակով։ Երկար ժամանակ արդեօք պիտի տևէ այդ աշխարհաւեր «հաւասարակշռութիւնը», որի պահպանման պատրուակով, և միայն պատրուակով, այնպիսի լերք կերպով գործում է Ութեղի բռնեցը Տկարի իրաւունքի վրայ։ Երկար ժամանակ արդեօք պիտի տևէ Թիւրքիայի այդ «ամբողջութիւնը», որ աշխարհի վարիչներն անսուրբ համաձայնութեամբ պահպանում են այժմ՝ իրար մէջ այն պատառելու համար վաղը, երբ հանգամանքներն իրանց աւելի ձեռնտուութեան։ Որի՞ ձեռքին է գտնուում այդ համաձայնութեան ղեկը։ Այդ ղեկին տիրանալու համար նրանք շարունակ մտքառում են միմեանց դէմ, ջանք են անում միմեանց ձեռքից խլելու այն, և հէնց այդ ճակատագրական հակառակութիւնները սպառնում են խախտել փառաբանւած հաւասարակշռութիւնը։ Մինչև հիմա եղած դէպքերն ասպացուցանում են այն, որ այդ ղեկն իսկապէս ոչ մէկի ձեռքումն էլ չէ, այլ կառավարւում է միայն պատահականութիւններով և տարօրինակ կերպով ներքնապէս շփոթում ու բարդում ընդհանաւ դրութիւնն Արևելքում, վառօթի պայթել սպառնացող շտեմարանի վրայ

կառուցանելով Եւրօպայի երեակայական խաղաղութեան շէնքը: Եւ այդպիսի պարագայում օսմանեան աւանակի մէկ անտեղի աքացին կարող է տակն ու վրայ անել ամեն հաշիւ: Եւ խկապէս էլ մինչև օրս անհաշտները համաձայնել են իրար հետ այդ աքացիի երկիւղից: Էնց այսօր, Հայաստանը զօհելուց յետոյ, Յունաստանը ջարդել տալուց յետոյ, նոյն աւանակին նրանք զինջանում են կրէտական խնդրում: Խաբելով ուրիշներին Արէտէի «ինքնավարութիւն» խօսքով, նրանք այժմ համաձայնում են, որ Արէտէն կառավարէ, թէ վարչական և թէ զինւորական կերպով, նոյն օսմանեան տէրութեան ձեռքով: Ղարձեալ զինջում աւանակին, և դարձեալ նրա անտեղի աքացիի երկիւղից դրդւած: Եւ այդ աւանակի աքացիից է կախւած եւրօպական հաւասարակշռութիւնը: Եւ անշուշտ, գերմանական նոյն թերթը չէ սխալուում, երբ աւելացնում է, թէ «սուլթանի իմաստութիւնը մեծապէս նպաստող է հաւասարակշռութեան»: Այո՛, սակայն աւանակի ամենամեծ թերութիւնն էլ այն է, որ խելքն իր ականջների պէս երկար չէ: Եւ ողորմելի է թւում այն Եւրօպան, որ իր հաւասարակշռութեան պահպանման յոյսը դրած է աւանակային իմաստութեան վրայ: Արաբիայի անապատներում թափառող, աշխարհի անցողդարձերին անտեղեակ զէրվիշն անգամ կարող է մարգարէանալ, որ այդպիսի հիմունքների վրայ հաստատւած հաւասարակշռութիւնն օր օրի վրայ սպասում է իր անկումը: Եւ այդ օրը Թիւրքիայի «ամբողջութեան» անկման ժամն էլ կը հնչէ:

Մեծ պետութիւնները սակայն այդ վտանգը զիտեն, վտանգն իրանց հաւասարակշռութեան անկման, որին պատճառ լինել կարող է օսմանեան պետութեան քրօնիկական և, հակառակ ամենայն խնամքների, անբուժելի հիւանդութիւնը: Բայց եւրօպական դիպլոմատիան չէ գործում միմիայն ըստ կէտի համար ըստ կէտի քաղաքականութեամբ: Ղիշդ է, այսօր նրան պէտք է խուսափել Թիւրքիայի «ամբողջութեան» խախտումից, որովհետեւ դա կուսածաղիկ է, որ կարող է առաջացնել ընդհանուր ընդհարում տէրութիւնների մէջ: Ղիշդ է նոյնպէս, որ այսօր նրան պէտք է հէնց այդ նպատակի համար խեղդել փոքր ազգերի ազատագրական ձգտումները և մինչև իսկ թող տալ ոչնչացնել նրանց, որովհետեւ իրանց յեղափոխական շարժումներով այդ ազգերը Թիւրքիային մրդում են դէպի անկման վիճք: Սակայն բացի այդ ժամանակաւոր շահից, որն օգը կը ցնդէ՝ երբ եւրօպական պետութիւններից մէկը կամ միւսը հարկ տեսնէ Թիւրքիայի իւզալի պատառը իւրացնել, կայ մէկ աւելի հիմնական պատճառ Թիւրքիայի

ժամանակաւոր պահպանման: Մեծ տէրութիւնների կողմից փոքր ազգերի գոյութեան դէմ լարւած այդ դաւադրութեան ամենահիմնական պատճառն այն է, առաջին՝ որ ռուսական ցարիզմի հետ օսմանեան սուլթանիզմն ամենաամուր պատնէշն է այն դէմօկրատական (ռամկավարական) հոսանքի դէմ, որը ծագելով եւրօպական պրօլետարիատի ձգտումներից, աւելի ու աւելի տիրանում է, փոքր ազգերի միջնորդութեամբ, Արեւելքում: Բօլզարեան, Ռումանիան, Սերբիան, Յունաստանն իրանց առաւել կամ նւազ շօշափելի դէմօկրատական հոսանքներով փոխադրեցին հարաւային Արեւելքում: Յեղափոխութեան դէմօկրատական զաղափարը: Աւելի հիւսիսում Ահմատանը խեղդւում է Ռուսաստանի ոտքի տակ՝ այդ դաղափարն էլ խեղդւած լինելու պայմանով: Իսկ եթէ այժմ անկախ դառնայ Ահմատանը, անկախ դառնան Մակեդոնեան, Արէտէն, Հայաստանը, աւելի հաստատելով իրանց կողմերում դէմօկրատական զաղափարը, — դրանով թուլանում է ցարիզմի ու սուլթանիզմի հակադէմօկրատական ու հակաիդէոլոգիական պատնէշի ամրութիւնը: Արիւրորդ. այդ պատնէշը ընկնիայի ու բռնակալութեան քարէ ծանր թւերն է տարածել եւրօպական պրօլետարիատի վրայ, զսպել ջանալով վերջինիս ձգտումների ու պահանջների աճող ընթացքը, և այդ պատճառով եւրօպական կապիտալիստ դասակարգն այդ պատնէշի երկու բռնակալ պահակներին, ցարիզմին նախ և ապա սուլթանիզմին, նկատում է իբրեւ իր, նոյն դասակարգի, շահերի պահակներ: Եւրօպական տէրութիւններն էլ, իբրեւ նոյն դասակարգի շահերը ներկայացնող ու վարող, ռուսական դեսպոսիզմի և սուլթանիզմի գոյութեան շարունակման մէջ է տեսնում եւրօպական բուրժուազիայի ապահովութիւնը՝ Եւրօպայում պրօլետարիատի հակայական ծաւալ ստացած ու սպառնացող հոսանքի դիմաց: Պրօլետարիատի կարմիր ուրւականը սարսափեցնում է նրանց, և գնահատում են այն ամեն զէնքերը, որոնցով կարելի է դրա դէմ գործել, թէկուզ երկիւղ կրելով, որ այդ զէնքերը, ցարիզմն ու սուլթանիզմը, վաղն ուղղւելու լինեն նոյն իսկ եւրօպական ազատամիտ պետութիւնների դէմ: Բայց այդ առաջակներն իրար մէջ համաձայնելու և իրար զինջանելու յատկութիւնը միշտ ունենում են, երբ վտանգը սպառնում է նրանց ամենքին: Էնց այդ հիմունքների վրայ է, որ Արեւելքի փոքրիկ ազգերի ազատութիւնը և նրանց կողմից դէմօկրատական քաղաքական դրութեան ձեռք բերելը վտանգաւոր է եւրօպական բուրժուազիայի համար և, ընդհակառակը, նպաստաւոր պրօլետարիատի ձգտումների և առհասարակ ազգերի դէմօկրատական ա-

առաջադիմութեան համար: Այդ տեսակէտից նա-
յելով՝ Արեւելքի փոքրիկ ազգերի դէմօկրատական
անկախութիւնը մեծ ծառայութիւն կը մատու-
ցանէ մարդկութեան: Նա մեծ ծառայութիւն կը
մատուցանէ մարդկութեանը նաեւ նրանով, որ մի
կողմից կանգնաւորուծէ ցարիզմի յաղթական ա-
ճումն ու ընթացքը դէպի Արեւմուտք այն փոքր
ազգերի հողերի վրայով, այդպիսով չեղորացնելով
նրա աւելի ու աւելի զգալի դարձած ճնշումը եւրո-
պական պայքարի մասին ձգտումները: Վրաց
միջին նաեւ Աւրօպայի ընդհանուր դէմօկրատական
զարգացման վրայ: Միւս կողմից նա, փոքր ազ-
գերի դէմօկրատական անկախութիւնը, վերջ կը
դնէ սուլթանիզմի գոյութեան, որն այսօր դարձել
է ցարիզմի համար մի բաց դուռ՝ իր բռնակալ ոգով
արգելք լինելու Աւրօպական դէմօկրատիայի առա-
ւել զարգացման առաջ: Այդ մի քանի տեսակէտից
էլ Ռօլզարիան, անփոխարինելի ծառայութիւն մա-
տուցեց մարդկութեան քաղաքակրթութեան շա-
հին, իր անկախութեամբ ու հակառուսական ըն-
թացքով պատնէշ կանգնելով Ռուսաստանի յա-
ւակնութիւններին դէմ՝ որը ձգտում էր Ռօլզարիան
իր ձեռքի տակ գցելով և նրա հողը կոխելով՝ ուղ-
ղակի դարձել եւրօպական դէմօկրատիայի աճող զար-
գացման դէմ և ամրապնդել պահպանողական ու
յետադիմական մի դրութիւն: Միւս փոքր ազգերի
ազատագրութիւնը կոչւած է լրացնելու և ամփոփելու
Ռօլզարիայի այդ պատմական ծառայութիւնը:
Նրանց ծառայութիւնը կը լինի յօգուտ մարդ-
կութեան առաջադիմութեան և աննպաստ եւրօպա-
կան բուրժուազիայի պահպանութեան: Բուրժու-
ազիան, միւս կողմից, փոքր ազգերի այդ ազա-
տագրութեան մէջ տեսնում է իր երկրների պը-
րօլէտարիատի յաղթութեան գլխաւոր պայմաննե-
րից մէկը, քանի որ այդ ազատագրութեամբ ան-
դամաւորուծում է ցարիզմի և սուլթանիզմի յե-
տադիմական ու արգելադրիչ ծանր ազդեցութիւ-
նը եւրօպական ազգերի առաջադիմական, դէմօկրա-
տական ձգտումների վրայ: Այդպիսով, բուրժու-
ազիան ձգտում է իրան ծառայեցնել աշխարհիս
երկու ամենանսեմ ոյժերին — ցարիզմն ու սուլ-
թանիզմը: Աւ հէնց այդ նպատակով իր կողմից
էլ յայտնում է նրանց պահպանողը:

Մենք ներկայացրինք, ահա, այն պայմանները,
որոնք իրանց բարդ ու կնճռոտ երեւոյթներով մեծ
տէրութիւններին ստիպում են պահպանել, մինչև
ամենավերջին ջանքի գնով, եւրօպական հաւա-
սարկղութիւնը, և դրա համար է, որ այսօր
հինգ պետութիւնները ծառայում են ցարիզմին
և պահպանում են սուլթանիզմը: Սակայն ան-
մահ է և միշտ ծշմարիտ հետեւեալը. կառավա-
րութիւնների հաշիւները ցնդում են օդը ժողո-

վորների վճռի առաջ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԽԱՐԵՐԴԻՑ

1 Սեպտեմբեր 1897.

Մեծ ջարդերի ծանր ազդեցութիւնը և անկէ ա-
ռաջացած տնտեսական քայքայուած կացութիւնը մի
տեսակ թմրութեան և ջղային հիւսնդութեան են են-
թարկած հայուն. նա անկարող է զգալու իր իրական
վիճակը և մտածելու անոր մասին: Նա անհամբեր կը
սպասէ օրւայ լուրին, շաբթայ սուրհանդակին, որի հետ
կապուած է իր ամբողջ խորհելու և տրամաբանելու
կարողութիւնը:

Շնորհով թիւրքական կառավարութեան բռնած
թշնամական ընթացքի՝ հայ ժողովուրդի թէ քաղաքացու
և թէ գիւղացու՝ վիճակը հետզհետէ կը վատթարա-
նայ և կընդունի անմխիթար կերպարանք: Հայ վաճա-
ռականութիւնը կը կորցնէ իր ոյժը և տեղի կը տայ
ամեն տեսակ առանձնաշնորհութիւններ վայելող թիւրք
դրամատէրերի ոյժի առջև: Ասկէ առաջ, ինչպէս Հա-
յաստանի ամեն քաղաքներն ու ամենայեւրոպեան
ները, նոյնպէս Խարբերդի նահանգի մէջ Հայ վաճա-
ռականը, հայ արհեստաւորը կամ խանութպանն էր,
որ կը տիրէր առևտրական հրապարակի վրայ, իսկ թիւր-
քը անընդունակ և անհեռատես վաճառականական աս-
պարէզի մէջ, միշտ ձեռնպահ և անուշադիր կը մնար
հայերի գործունէութեան առջև: Մինչդեռ այսօր, ընդ-
հակառակը, երբ հայ հարստութիւնը պարբերաբար
ահագին ցնցում կրեց և խարխիւցաւ, տգիտութեան և
վայրենութեան մէջ խորասուզուած թիւրքը զգաց հի-
ասթափում. նա սկսաւ դէպի իր ոյժերը վստահու-
թեան գիտակցութիւնը ունենալ: Տասնեակ տարիներ
մէջ պատւաւոր դիրք բռնած և նշանակութիւն ըս-
տացած հայ դրամատէրը կամ հարուստ կալուածատէ-
րը մնանկ և անկարող հրատարակուեցաւ և ամեն ա-
նոնք, որ կը ջանան նորանոր ձեռնարկներ անել, այդ-
պիսիներ ևս ընկճուած իրենց շրջապատող անխուսա-
փելի հանգամանքների առջև՝ կը զննան թիւրք դը-
րամատէրի հետ ընկերակից դառնալ և միասին գործ
անել: Պարզ է, թէ այդ ինչպիսի վնասակար հետե-
ւանքներ պիտի առաջացնէ ապագայի մէջ: Թիւրքը մի
անգամ տեղեակ եղած վաճառականական արուեստին
ու գաղտնիքներին և շատ աւելի գերակշռող դրամա-
գրիւնով կարող պիտի լինի տէրը դառնալ առևտրական
հրապարակին և արդէն այդ յոյսերն ու մտածումներն
են, որ կառաջնորդեն իրենց խնդրելու հայու ձեռնադը-
ւութիւնը:

Վաղթականութիւնը անվերջ կերպով իր կարա-
ւանները կը շարունակէ: Ամեն շաբաթ բազմաթիւ ըն-
տանիքներ յիմաս բարով՝ կասեն մնացածներին. ո՛ր
— դէպի հեռավոր երկրներ, դէպի Ամերիկա, դէպի
գործաւորութիւն՝ անտէր թողած իր տունն ու պար-
տեղը, հողը, կահարասին: Կառավարութիւնը անհատ-
ների անցագրի համար մեծ արգելքներ կը յօրուցա-
նէ, սակայն ընտանիքով միասին գաղթողներին կը
թողատրէ՝ այս պայմանով, որ թէ երբ թապաւ,
այսինքն թիւրքական հպատակութիւնը թողուն և վե-
րստին հայրենիք վերադառնալու իրաւունքէն զրկուած
լինին: Այսուհանգերձ դարձեալ անվերջ է գաղթա-

կանները շարքը: Այս վերջիններս ալ ունեն իրենց լուրջ անդամագրելի պատճառները: Այդ ընտանիքների մի կամ աւելի անգամը երկար տարիներէ ի վեր կը գտնուի հեռուոր երկիրներ՝ պանդխտութեան մէջ և կառավարութիւնը երկաթէ շղթաներով է կրտրած անոնց վերադարձի ճանապարհը. մինչդեռ ինք այստեղ կը հեծէ անտաների զրկանքների, չարաւորանքների և անօթութեան մէջ. անպակաս են ամեն տեսակ նախատենք, անպատուութիւն, արհամարհանք... Գաղթականութիւնը մեծամասնութիւն կը կազմէ գիւղացիների մէջ և արդէն նա է եղած ամենէն աւելի զրկուողը, հալածուողը: Կոտորածի ու սուրսափի կարմիր թւականներէն առաջ գլխաւորապէս հայ գիւղացու ինչքը, կեանքն ու պատիւն էր առարկայ եղած կառավարական զզուելի պաշտօնեաների և կիսավայրենի թիւրքի ամեն տեսակ կամայականութեան և քմահաճօքներին, ընդհանուր աղետի միջոցին ամեն կերպով աւելի տուժողը նա եղաւ և գարձեալ այժմ թիւրք ոստիկանի ու հարկահաւարի խարաղանի ներքեւ ամենէ խիստ նա է կուչ եկած:

Ամենախիստ հայոյանքէն աւելի նախատական էր սուլթանական այն պաշտօնական զեկոյցը, որը հրատարակուեցաւ Կ. Պոլսի թիւրք թերթերի մէջ և տրտատպեցին նոյն տեղի հայ լրագրերն ալ: Իբր թէ ըէֆօրմները վեց նահանգների մէջ ամբողջովին գործադրուած են և կը մնան մի քանի գաւառներ միայն, որոնց քրիստոնեայ ազգաբնակութիւնը չէ ուզած ամբողջացնել ժանդարմների ու հարկահաւարների թիւրք և այն ալ այս տարւոյ վերջերը անպատճառ պէտք է լրանայ... Ինչո՞ւ չը տարակուսիլ, թէ այժմ Հայաստանը մի դրախտ է, ուր Եփրատն ու Տիգրիսը կը բղկնեն, նա երջանիկ է և պատմական օրերէն աւելի վարդազոյն... հարկը հազարների արիւնով ներկուած ու կարմրած... Իբր թէ բարեկարգութիւնը մի քանի խեղճ, բոլորովին անգործ հայերի ժանտարմ, հարկահաւար լինելու գործի մէջ կայանար, իբր թէ մի քանի սրիկայ, անբարոյական, կիսաթիւրք հայերի գայլմագամ կամ մուսլին անուանուիլը գոհացում տրուած լինէր հայ ժողովրդի անհրաժեշտ և բնական պահանջներին: Բացի այդ՝ արդէն չը գտնուեցաւ մի խելքը գլուխը հայ, որ ցանկութիւն ունենար մտնելու թիւրքական կառավարական վատթարացած շրջանների մէջ: Եթէ հանգամանքների շնորհով մի քանի անձնաւորութիւններ ևս գտնուեցան, որոնք յանձն առին թիւրքական պաշտօնը, այդպիսիներն ալ հազիւ քիչ ժամանակ յետոյ չարաչար կերպով սպանուեցան նոյն իրեն՝ պաշտօնեայ նշանակող կառավարութեան՝ միջոցով: Ինչպէս՝ Մալաթիայի հայ երիտասարդ փոխ-գօմիսէրը և Փէրի գաւառակի մուսլին Թ. թ վալիւան Պողոսը, որոնց առաջինը՝ գիշերային պահապանութեան սովորական պտոյտի պահուն խողեսողուեցաւ իրեն հետ ընկերացած զինւորների կողմէ. իսկ երկրորդը՝ Արսլան բէկ կոչւած քիւրդ յայտնի աւազակապետի ձեռքով խեղդամահ եղաւ իր՝ Թ. թ վալիւանի տան մէջ: Ամեն կողմ ահագին աղմուկ բարձրացաւ, դեսպաններն իրենց պետութիւններին գրեցին, գաւառները ամեն կողմ տարածեցին, թէ ողորմած սուլթանը երեք տարւոյ զինւորական տուրք շնորհ ըրաւ: Սակայն մի տարին դեռ չը բոլորած արդէն թէ քաղաքների և թէ գիւղերի մէջ ամենախիստ կերպով հարկահաւարութիւն կը կատարուի:

Հայ ժողովրդի, հայ գիւղացու ընդհանուր կոյցութիւնը այս է ամբողջ գաւառների մէջ և այս ամենը կը գործադրուի սուլթանի և իր կառարարութեան մասնաւոր ծրագրով: Սակայն միշտ անպակաս են եղել նաև այնպիսի հայեր, ժողովրդի գլխաւորները համարուած անձեր, որոնք իրենց ամենազգուշի ընթացքով աջակից են եղել մեծ Մարգասպանի ջանքերին և ծախքը պատահապէս եղել ժողովրդի կենսական շահերի առջև: Իրիշխու հայ ժողովուրդը այստեղ աննկարագրելի թշուառութեան մէջ կը տառապի և իր արտասուքի հետ կը խեղդուի իր բողբոջ ձայնը, միւս կողմ՝ Կ. Պոլսի մէջ պատրիարք անւանուած Օրմանեանը, յանուն հայ ժողովուրդի, շնորհակալութիւն և գոհունակութիւն կը յայտնէ հօրիւր հաղարաւոր անմեղների արիւնի մէջ հրճուող գաղանին. նորա արեւշատութեան համար, նորա գահի անսասանութեան համար աղօթքներ ու մաղթանքներ կը կարդայ: Նա կոյր ու անզգայ է եղել այն տխուր, աղետալի իրականութեան առջև որի մէջ կըսպառի հայ ժողովրդի կեանքը:

Թիւրք հասարակութեան ուշադրութիւնը՝ լարուած դէպի յունական պատերազմն ու անոր հետեւները, հանդարտեցուց մի քիչ անոր ունեցած մոլեռանդութիւնն ու կատաղութիւնը գէպի հայերը: Այսօր ամենակեղտոտ, նախապաշարուած թիւրք մօլլան ալ քաղաքական խնդիրների ուշադիր մի հետեւող է: Հայկական շարժումները, յունական խնդիրները, թիւրք ազատակներ իր բոլորողները բաւական սթափեցուցին անոր թմրութիւնը և նա սկսած է մտածել իր վիճակի ու ապագայի մասին: Սակայն ու է օգտակարութիւն չի կարելի սպասել. նա, թիւրք հասարակութիւնը, զուրկ լուրջ գաղաղութենէ, միայն օրուայ դէպքերի աղբեցութեան համեմատ կը տպաւորուի և կը շարժուի: Սխալ կը լինի ենթադրել, թէ երկրորդ ջարդերի միջոցին, եթէ սուլթանը վերստին հրամաններ արձակէ ատոր համար, նա ձեռնպահ կը մնայ և կը մերժէ կատարելու սուլթանական հրամանները:

ԼԵՌՆՈՐԴԻ.

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԻՑ.

10 հոկտեմ. 1897.

Մի կողմէ տեղական թերթերի միջոցով սուլթանը հրատարակել կը տայ բանակցութիւնների վերջաւորութեան և հաշտութեան պայմանների մասին յօդուածներ, միւս կողմէ պատերազմական նորանոր պատրաստութիւններ կը տեսնէ: Մի քանի օր առաջ դարձեալ 2-3 հազար զինւորներ գիշերանց Սիրէճիի ճանապարհով ուղարկուեցան սերպական սահմանագլուխը, ուր դրութիւնը գնալով աւելի սուր կերպարանք կստանայ: 600 ձիեր Էտիրնէ ճամբուեցան և սուլթանի մասնաւոր հրամանով շուտով կը պատրաստուին 80,000 զինւորների նոր հագուստ: Տեղիս թիւրք և հայ թերթերի միջոցով կառավարութիւնը կը ջանայ միշտ իրականութիւնը սքօղել և խեղաթիւրել՝ հասարակութեան չը գրգռելու համար:

Յունաստանի վրայ տարած յաղթութիւնները մեծ Մարգասպանին խելագարուելու աստիճանի ուրախութիւն պատճառած են: Թեսալիայի մէջ գտնուած զինւորներին քաղաքներու համար ինքը՝ սուլթանը մասնաւոր հե-

ապրիլ է տուած թէ՛ Մարգարէի օգնութեամբ ունեցած փառաւոր պատերազմներէս և յաղթանակներէս պատճառով այս տարւոյ մէջ ուրախութիւնս անհուն է, որի նմանը ոչ մի տարւոյ մէջ չեմ ունեցել...» Ի հարկէ շատ ճշմարիտ է. այժմ նա, հայ ժողովրդի այդ արիւն-նախուժ գաղանը, իր տարած աժանագին յաղթանակ ների շնորհով շատ գոռովացած է և իրեն կենթադրէ ոչ միայն թիւրքիոյ, այլ նաև ընդհանուր իսլամական-նութեան և նոյն իսկ Եւրոպայի վշայ իշխող մեծ խա-լիֆա, մեծ փառիշատ:

Անցեալները, սուլթանի տօնի օրը, Օրմանեան պատրիարքի ուրախութիւնն ալ չափ չունէր: Վերջինս, Կ. Պօլսի հայոց պատրիարքարանի նոր Շէյխը, իր հետ ունենալով իրեն արժանաւոր ընկերակիցներ՝ տխրահո-չակ Ալզգեան և Բարդուղէմիոս սրբազանները՝ սուլթա-նի պալատը գնացին անոր ամեն շնորհատրելու և ի-րենց ամենախոնարհ հպատակութեան և ծառայութեան զգացումները յայտնելու: Սուլթանը հայ ազգի սոյն ա-մենանշանաւոր վարիչներին ցոյց տուաւ սիրալիր ընդու-նելութիւն և պարգեւեց շքանշան և մեծամեծ նուէրներ ի նշան անոնց հաւատարիմ ծառայութեան և անձնէր գործունէութեան: Օրմանեանը վերադառնալով պալա-տէն՝ «Վեհապետի» կենացը և արեւաշատութեան հա-մար սրտաբուխ աղօթքներ կարդաց եկեղեցու մէջ և միևնոյն ժամանակ յատուկ շրջաբերականով հրաւեր կարդաց հայ հասարակութեանը՝ իր օրինակին հետե-ւել, հանգիստ և միամիտ լինել, որովհետեւ սուլ-թանը խոստացել է իրեն, որ հայ հպատակ ժողովրդի բարօրութեանը համար որոշմած արար հոգս պէտք է անէ:

Գաւառներէն Պօլսի ճամբորդող հայեր թէև ու-նեն կանոնաւոր անցագրեր իրենց ձեռքը, դարձեալ կը հանդիպեն ամենախիստ ուշադրութեան, աստիկանական հակողութեան և շատ անգամ փոխաների միջոցով կա-ռաջնորդուեն ուղղակի բանտ: Նոյն խստութիւնները կը գործադրուին նաև Պօլսէն թիւրքիայի այլ և այլ կող-մեր մեկնողների վրայ: Սոյն խստութիւնները մեծ ա-ռիթ են եղած աստիկանների համար՝ դրամ կորզելու բոլոր ճամբորդներէն: Անցեալ օր պօլսեցի մի երիտա-սարդ, ունենալով իր մօտ վաւերացած կանոնաւոր անցագիր, երբ շոգեմաւ կը մաներ աստիկանները ձեր-բակալեցին զայն: Հայ երիտասարդը ցոյց տուաւ իրեն ձերբակալող աստիկանին իր անցագիրը և խնդրեց ա-զատ ծանապարհ: Թիւրք աստիկանը ոչ մի ուշադրու-թիւն չէր դարձնել անոր անցագրին: Երբ հայուն կող-մէ ստացաւ նա մի մեծիտ, որին համար նա կանէր այդ ամենը, վերջացուց իր խստութիւնները և բարի ծանա-պարհ մաղթեց: Աստիկանը դրամը գրպանը դնելէն յետոյ ասաց, թէ ինչպէս բոլոր աստիկանները, նաև ինքը չը գիտեր կարգաւ կամ գրել թիւրքերէն. իրենց համար անցագիրը և անոր մէջ գրուածները անծանօթ են և չունեն ո և է կարեւորութիւն, սակայն դրամին շատ լաւ կը ծանաչեն...

Ատաբազարէն 4 ժամ հետի գտնուած քերիզլի հա-յաքնակ գիւլէն 11 անձեր ձերբակալուած և Պօլսի բերուած են իբրև յեղափոխականներ: Գիւլը մի քանի հարիւր զինւորներով պաշարուած է և բնակիչների զեն-քերը բռնութեան տակ հաւաքուած: Ատաբազարի Զա-յիւր կոչուած տեղը հայ օրսորդների և վրանաբնակ թիւրքերի մէջ բաւական մեծ մի կռիւ է պատահած, ուր երկու կողմէ շատ վիրաւորուածներ կան: Ատաբա-զարի գալմազամը իր շահատակութիւնների և հաւա-

տարիմ ծառայութիւնների համար, որպէս վարձատրու-թիւն, սուլթանի կողմէ ընդունեց շքանշան:

ԱՍՏԼՈՒ.

ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆԱԶԸՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Նուէր համոզմունքի ընկերներին)

«Հնչակ» իբրև յեղափոխական թերթ հետեւ-լով ներկայ դարու բարձր ու հասուն գաղափարնե-րին՝ հայերիս մէջ առաջինն է եղել հետեւող և քա-րոզող սօցիալիստական մտքերի. իսկ իբրև կուսակցու-թիւն նա առաջինն է երեւան եկել անտեսական, հասա-րակական ու քաղաքական որոշ ծրագրով և ուղղու-թեամբ և հայութեան մէջ կազմել է առաջին քա-ղաքական կուսակցութիւնը՝ այդ խօսքի եւրօպական և ամենաընդարձակ նշանակութեամբ:

Այն հասարակութիւնը, այն ազգը, որի մէջ վի-ճակած է գործելու Հնչակեան կուսակցութեանը, ոչ թէ միայն զուրկ է քաղաքական լայն իրաւունքներից, այլ և զուրկ է տարրական ինքնակախութիւնից: Նա, հայ ազգը, դեռ օտար միապետի կամակատարն է. նա դեռ ստրուկ է մէկ այնպիսի միապետի ճանկում, որը արիւննարբու և պաշտօնող գաղանի իսկական տիպար է: Նա դեռ գտնուում է քաղաքական այնպիսի մի դը-լութեան մէջ, որ անհնարին է նրան բաւականութիւն տալ զարգացման և առաջադիմութեան ամենակենսական ու ամենապարզ պահանջներին ու ձգտումներին: Հէնց այս պատճառներով Հնչակեան կուսակցութիւնը ա-մենաառաջին և ամենամօտ նպատակ է ընտրել՝ ձեռք բերել ազգային անկախութիւն ու անկախարական լայն իրաւունքներով, որոնց հաստատութեամբ միայն հայու-թիւնը կարող է մտնել իր բնական զարգացման ան-խափան շաւղի մէջ, որից յետոյ ժողովրդի ձգտման և ժամանակակից պատմական պահանջների համա-ձայն կատարել անտեսական-սօցիալական յեղաշրջում: Համոզւած լինելով, որ սուլթանների «խաղաղ րէ-ֆորմներ» միջոցով անկարելի է ձեռք բերել քաղաքա-կան ընդարձակ իրաւունքներ, սրանք միայն կարող լինե-լով նպաստել հայ ժողովրդի ժամանակակից պատմա-կան առաջադիմութեանը նիւթապէս ու քաղաքականա-պէս, «Հնչակի» կուսակցութիւնը միջոց է ընտրել բռնի եղանակը — Յեւափոխութիւնը՝ Ապստամբու-թեան միջոցով:

Նախ քան «Հնչակի» երեւան գալը, 1887 թիւն, Հայութեան մէջ հայկական Յեղափոխութեան գաղա-փարը դեռ ևս որոշ կերպով գծագրուած և ձեւա-կերպուած չէր, թէև դեռ շատ կանուխ յեղափոխու-թեան նախագաղափարը արծարծուում էր և լուսաբան-ւում: «Հնչակ» լինելով հայկական կեանքի որոշ զարգացման աստիճանի ծնունդ, կարողացաւ ժամանա-կի ոգին և կեանքի պահանջները ընդգրկել և միևնոյն ժամանակ այդ ոգու և պահանջների ճշմարիտ արտա-յայտիչը և ձեւակերպողը հանդիսանալ՝ դրա իմաստի ընդարձակ նշանակութեամբ: Նրանով Հայութիւնը ա-ռաջնորդեց և մտաւ բոլորովին պատմական մի նոր շըր-ջանի և նոր ուղղութեան մէջ: Նա մեր պահպանողա-կան, ա ելի ևս լաւ է ասել, բարոյապէս ընկած ըս-

տրկացած կեանքը ենթարկեց յեղափոխութեան՝ նրա մէջ մտցնելով առաջնութեան ոգու և գաղափարի ոյժ, որով միանգամայն գործին պարզեցեց նոր կեանքը: Մեր ընդհանուր կեանքը և աղատամիտ կոչւած մամուլն ու գրականութիւնը, որոնք յետ էին մնացել և այլ ևս անկուրող էին գոհացում տալ ընդհանուրի պահանջներին, տեղի տւին նոր հոսանքի առջև, և այդ օրից սկսած յեղափոխական նոր կեանքը, նոր գաղափարը, նոր գրականութիւնը ծաւալեց և ամենաանհրաժեշտ և տիրապետող տարր դարձաւ հայկական ոգու և իրականութեան մէջ: «Հնչակը» եղաւ նաև այդ նոր գրականութեան հիմք գնողը:

«Հնչակը» կենդանի, իմաստալի և ոգեշունչ քարոզը սթափեցրեց հայ ազգին անշարժ վիճակից. իսկ «Հնչակը» քարոզի ծնունդ և նրան հետևած կտրուկ, վճռական և զօրաւոր գործունէութիւնը ցնցեց հայրութեանը և զգացնել տւեց նրան իր ունեցած ոյժը:

Ահա Եւրօպայի աչքում «մեռած երկիր» Հայաստանը վերածնւեց նոր կեանքով, նոր մտքով, նոր գործով և անցաւ ազգերի շարքը, այն ազգերի, որոնք միշտ ձգտում են իրանց անհատականութեան զարգացումը և դէպի մարդկային բարօրութեան և եղբայրութեան իրաւունքի իրագործումը, որ այդ անհատականութիւններին պետք է դնէ մէկ և ընդհանուր հաւասար հոգի վրայ: «Հնչակը» սկսումով սկսեց հայկական նոր կեանք՝ տոգորւած և առաջնորդւած Արեւմուտքի գիտութեան ներշնչումներով: Հայ ժողովուրդը՝ պատրաստւած Հնչակեան գաղափարներով և ուղղութեամբ և սերտ կերպով կապւած նրա հետ՝ առաջ բերաւ մի շարք յեղափոխական գործողութիւններ, մէկ ամբողջ յեղափոխական գործունէութիւն, ազգային յեղափոխական պատմական նոր շրջան, որոնք դարձան հայ ազգի աղատութեան հիմնաքարերը և որոնց շնորհով եւրօպական պետութիւնները հարկադրեցան հայկական խնդրի լուծումով զբաղւել և, որպէս ժամանակի ամենաառաջնակարգ և այրող մի խնդիր, դրեց սեղանի վրայ, հանդիսանալով վտանգաւոր իր հետևանքներով Եւրօպայի խաղաղութեան համար, եթէ բաւարար լուծում չը տրւի նրան:

Ընդհանուր գործունէութիւնը յափշտակող, ոգեւորւած ու ոգեւորիչ էր: Սուլթանական սպիտակ տէնօրը, գործադրւած մօնօթական ամենավայրենի միջոցներով, իր սոսկալի և գազանային ընթացքով փոխանակ սարսափի և երկիւղի՝ յոյս ու եռանդ էր ներշնչում թէ՛ յեղափոխականին և թէ՛ ժողովուրդին: Խեղճորոյս կառավարութիւնը գլուխը խալաւ կորցրել էր, իրան անկարող զգալով խեղդելու արդար պահանջի ուժգին բողբոջ և յեղափոխակա կարմիր տէնօրը: Այդ ժամանակամիջոցում, 87-թւից մինչև հէնց վերջերս, յեղափոխութիւնն ասելով հասկացում է Հնչակեանութիւն, իսկ «Հնչակ» ասելով ամբողջ հայկական յեղափոխութիւնն իր գաղափարով: Պօլսից սկսած մինչև Զէյթունի աղատ լեռները, մինչև ամենահեռաւոր գաւառների խուլ անկիւնները գործունէութիւնը, յեղափոխական կեանքը եռում էր և ընդարձակւում: Իրերի դրութիւնը աւելի ու աւելի սպառնական էր դառնում կառավարութեան համար. օրից օր սպասւում էր ընդհանուր և սոսկալի անկում՝ սուլթանական ըէֆէմի, և խնդիրը մազաչափ մօտ էր իր լուծման: Սուլթանը ստիպւած ստորագրեց բարենորոգումների նախագիծը. կրկին մի հարւած՝ նա ստիպւած կը

լինէր ստորագրելու նաև հայկական ինքնավարութիւնը: Ահա այդպիսի օրհասական ժամանակում վերջերս իր շահատակութիւններով յայտնի դարձած, ոստիկանութեան նախարար Նազըմ բէյը սուլթանի կողմից ահա մայ ընդունեց իբրև դիկտատօր՝ յատկապէս ճնշելու հայկական շարժումները և Պօլսում: Նազըմը, խորամանկ, ջեղհիտ, շահասէր թուրքական մի պաշտօնեայ, և Պօլսի «կարգապահութեան» դիկտատօրի պաշտօնը ստանալուց յետոյ իր գործունէութեանը տւեց որոշ ձև և շատ բաներում սկսեց հետևել եւրօպական ոստիկանութիւնների ուղղութեանը: Լրտեսութիւնը, և Պօլսում, նրա օրով ընդունեց ահագին նշանակութիւն և կազմակերպեց լրտեսների լէգէօններ: Շնորհով վարձատրութեան՝ լրտեսութիւնը դարձաւ ագրուստի աղբիւր, արհեստ կանոնաւոր եկամուտով: Թիւրքական կառավարութեան սնանկացած ֆինանսի վերջին հոգեպահիկ փշռանքները առատ կերպով մսխւում էին յիշեալ լէգէօնների վրայ: Այդ գումարներից պակաս չէր օգտուում ինքը՝ Նազըմը՝ իր գրպանի թոքախտը բժշկելու համար:

Ամեն դասակարգից բաղմամբ լրտեսների օգնութեամբ Նազըմը հնարաւորութիւն ունեցաւ բաւական մօտից և այլ և այլ եղանակներով հետամուտ լինելու հայ-յեղափոխական կազմակերպութեան: Լրտեսութեան ծաւալումից սուլթանների մայրաքաղաքում առաջացան անթիւ ձերբակալութիւններ և նրանց խիստ հարցաքննութիւնները: Նազըմի հայ խորհրդական բարեկամներին ուսնք յեղափոխականի դիմակի տակ աջողել էին սպրդել, մուտ էին գտել և Պօլսի յեղափոխական այլ և այլ խմբերի մէջ: Նազըմին աջողել էր կողմնակի կամ ուղղակի կերպով իրան մօտեցնելու պօլսական «գործիչներից» ոմանց, որոնք յեղափոխական խմբերի մէջ էին մտել: Նա կարողացել էր գուշակել նրանց թոյլ կողմերը և արդէն թափանցել էր նրանց հոգու մէջ: Նազըմը երբեք չէր աշխատում իսկոյն փչացնել, ոչնչացնել իր ձեռքը գցած առաւել կամ նազ աչքի ընկնող յեղափոխականին, նամանաւանդ մասնաւորապէս նրանց, որոնցից յոյս ունէր, թէ կարող էին օգտակար դառնալ իր ծրագրի գործադրութեան գէպքում: Նա այդպիսիներին ամեն աղէկական միջոցներով և պատշաճ եղանակներով, նայած թէ ձերբակալւած էին դրանք՝ թէ ոչ, հիւրասիրելով, բարեկամ ձեւանալով, bon vivant եւրօպացիի յանգերով խօսում, ուտում էր նրանց հետ, շողորթում և հովանաւորում էր և պահպանում, որով և նրկատւեցաւ բարեկամ և ապա, աննկատելի կերպով, նոյն իսկ դարձաւ խորհրդատու թոյլ կամ վստ, շահախնդիր և դասալիք գործիչներին: Ում համար գաղտնիք է, որ նա կանոնաւոր գաղտնի յարաբերութեան մէջ էր, և խնամատար ու հովանաւորող, և Պօլսի մի քանի հայ աչքի ընկնող «գործիչների» հետ: և Պօլսի վերջին (1895 թ). Հնչակեան ցոյցի նախագիծը, շնորհով մի քանի դիմակաւոր յեղափոխականների, անյայտ չէր նրան, և Ցոյցի կազմակերպիչներից կային ոմանք, որ հէնց ցոյցի օրերը կաֆէներում ու փողոցներում բացարձակ կերպով նրա լիքի տակ ման էին գալիս և աղատ մնում, իրանց «հերոսութեամբ» զարմացնելով միամիտներին: Հակառակ Հնչ. կուսակցութեան կենդրոնի հրահանգի հայ հարուստներից, ամենախիստ տեւօրի միջոցով, փողեր, տասնեակ հազարաւոր օսկիներ կորցնել և ապա շարունակ չը վտանգւելը,

— արդէն ըստ իրենեան ամենազօրաւոր և անդիմադրելի փաստեր են հաստատելու, որ Նազիմը բաձարձակ տէր էր դարձել Կ. Պօլսի մի կարգ «յեղափոխականներին» և նրանց գլխաւորներին:

Բայց ինչն էր ստիպում մի մարդու, որ կոչւած էր յատկապէս շարժումները ճնշելու՝ ընկերակցել մի քանի «յեղափոխականներին» հետ և կազմել մի յատուկ աւազակախումբ՝ բոլորովին գաղտնի յեղ. կազմակերպութիւնից: Այդ մեթօզն ապացուցանում է, որ Նազիմը իր նպատակին հասնելու ձևի վրայ բոլորովին այլ կերպ էր նայում: Կրօն պաշտօնն ու նպատակն էր հիմնովին ջախջախել յեղափոխական կազմակերպութիւնները. բայց նա տեսնում էր, որ տարիների ընթացքում իր թափած ճիգերն ապարդիւն էին անցնում, յեղափոխականները շարունակ զօրանում էին: Նա այդպիսով համոզւել էր, որ այդ անել իրան կաջողի միմիայն այն ժամանակ, երբ կարող կը լինի ապականող որդը գցել հայ յեղ. կազմակերպութեան մէջ իսկ, առաջացնել ներքին գծաւորութիւններ, անվերջ երկպառակութիւններ և այս եղանակով կազմակերպութիւնները իրար դէմ լարւելով՝ իրար չեզոքացնել, իրար ջախջախել: Չգտումն ու նպատակ ունենալով հայ ժողովրդի վերայից չեզոքացնելու, հեռացնելու «չնչակի» զօրաւոր ազդեցութիւնը, որն էր միակ լուրջ յեղափոխական ոյժը, որի դէմ 1890 թէից սկսած կուել էր, բայց միշտ յաղթւել, ու նահանջել, որից էլ կառավարութիւնը կրում էր մեծ երկիւղ, Նազիմը դիմեցայդ ամենաւարպետ միջոցին: Նազիմը ձգտեց կողմնակի կերպով թափանցել չնչակեան Կուսակցութեան ներքին աշխարհը և պառակտել նրան: Ահա թէ ինչո՞ւ համար ինքն իրան դրել էր վերոյիշած դերի մէջ, այսինքն՝ սիրաշահել աչքի ընկնող թուլամորթ, էապէս վատասիրտ յեղափոխականներին, որոնք «յեղափոխական» էին դարձել կամ մօգայի շնորհով, կամ բաղդախնդրութեան, շահամոլութեան, նաև ստոր փառասիրութեան, «անուն» ստանալու ներքին դիտումներով: Դրա համար Նազիմը հոգով ապականւած Կ. Պօլսից աւելի լաւ ասպարէզ չէր կարող գտնել:

Nord.

(Վերջը յաջորդ համարում.)

ՅՈՒՆԱՍՏԱՆ, ԿՐԵՏԷ ԵՒ ԹԻԻՐԻԻԱ.

Եւրո Սօլզբերի առաջարկեց, որ Գունա-Թիւրքական խնդրում Անգլիա, Ֆրանսիա և Ռուսիա միասին գործեն և երաշխաւորեն Գունական կառավարութեանը. նաև Պետութիւնները երաշխաւորեն պատերազմական լգանքի փոխառութիւնը և Գունաստանի եկամուտներն գօնդրօլի տակ առնելով՝ նրա մի մասը յատկացնեն տուգանքի վճարումներին:

Արեւ-Ֆիլիպ-Գորրի դեսպաններին ներկայացրեց Սօլզբերի սոյն առաջարկը և թելադրեց նշանակել վեց անդամից բաղկացած մի միջազգային գօմիսիօն՝ իւրաքանչիւր պետութեան կողմից մի-մի հոգի, որոնց գօնդրօլի տակ Գունաստանը ցոյց պէտք է տայ հասոյթի աղբիւրներ իւր երկու պարտքերի — պատերազմական տուգանքի և արտաքին պարտքերի — համար: Գօմիսիօնի նշանակելուց յետոյ անմիջապէս Թեսալիան պէտք է դատարկէ թիւրքական զինւորներից:

Դեսպանները հրահանգ ստացան իրանց կառավա-

րութիւններից՝ ընդունել Սօլզբերի առաջարկը աննշան բարեփոխութեամբ, որից յետոյ ոչ պաշտօնապէս ցոյց տւին Թէֆֆիզ փաշային: Սօլզբերին թելադրել էր նաև՝ հաշտութեան նախաբանը կնքելուց վերջ մի ամիս ժամանակամեջոց նշանակէ թիւրքական զինւորների ամբողջապէս Թեսալիայէն հեռանալու համար:

Շաբաթ օրը՝ սեպտեմբերի 19-ին առանց վիճաբանութեան դեսպանները իրանց ժողովում կնքեցին խաղաղութեան դաշնագրութիւնը:

Կաշնագրութեան պայմանները մեծ անբաւականութիւն առաջ բերեց Աթէնքում: Գունական բոլոր թերթերը գանգատում են այդպիսի անարգար վերջաւորութեան նկատմամբ:

Թիւրքական կառավարութիւնը զինւորական մեծ պատրաստութիւններ ունի: Վերջին երկու շաբաթւայ ընթացքի մէջ զանազան իրագէներով հրամայած է շուտով գործադրել այլ և այլ որոշումները: — Յիսուն վաշտ զինւորների ամբողջական պատրաստութիւն Անատոլիոյ նահանգների մէջ: Տեղեկագրած է երրորդ զօրաբանակի հրամանատարութեանը քսան վաշտ կանոնաւոր զինւոր ուղարկել Թեսալիա՝ գրաւելու համար նոյն քանակութեամբ զինւորների տեղը, որոնք այնտեղ անյարմար կլիմայի պատճառով տանջւում են: Սոյն բեֆիֆները չը պիտի ուղարկուին ոչ պուլլարա-կան և ոչ ալ մօնթէնէկոյի սահմանները, այլ պատրաստ վիճակի մէջ պէտք է պահւին: Մէկ ուրիշ իրատէսով հրամայում է Երզնկայի չորրորդ զօրաբանակին հրամանատարութեան՝ կազմակերպել քառասուն վաշտ զինւոր իրենց բոլոր պարագաներով միասին՝ դասաւորած ութ զօրաբաժնի: Չորրորդ իրէտէով Թուրքութեանը պատկիրում է՝ Համիտիէ հեծելազուգերին դնել պատերազմական պատրաստ վիճակում և կազմել մի գօմիսիօն մարմին՝ քննելու համար երկրի ամեն կողմ բոլոր մթերանոցները, ռազմամթերք ևն. ևն:

Կրէտէում Սուտայի ճանապարհի վրայ քրիստոնեաների այգիները աւերւած ու քանդւած են զինւած մահմետական խմբերի կողմից: Թիւրքական զինւորները ամեն էերպով օգնում և քաջալերում են մոլեռանդ մահմետականներին: Ապստամբները որոշել են իրանց զենքերը վար չը գնել՝ մինչև բոլոր թիւրք զինւորների կողմից հեռանալը: Նրանք շարունակական կերպով պահանջում են, որ ինքնավարութեան առաջին քայլը պէտք է լինի թիւրք զինւորների մեկնելը:

Դուռ-վեց պետութիւնների Կ. Պօլսի ներկայացուցիչներին մի-մի շրջաբերական է ուղարկել, որով հրամայում է նրանց ստիպել պետութիւններին կարգադրելու Կրէտական հարցը: Այդ շրջաբերականի միջոցով առաջարկած է — զինաթափութիւն բոլոր բնակիչներուն թէ քրիստոնեայ և թէ մահմետական և նշանակել քրիստոնեայ մի ընդհանուր կուսակալ, Օսմանեան հպատակներից, որը կանանու է Բ. դրան կողմից պետութիւնների հաւանութեամբ շրջաբերականը կը պարունակէր այն միտքը, թէ Կրէտէն թիւրքական հող է և պէտք է ամրացած լինեն այնտեղ թիւրքական զինւորները՝ թիւրքական բանակում ծառայող մի եւրօպացի պաշտօնեայի հրամանատարութեան ներքև:

Ռ Մ Բ Ա Բ Կ Ո Ւ Թ Ի Ի Ն .

«Բէյութի» թղթակիցը հոկտեմբեր 7-ին Կ. Պօլսից հեռագրում է հետեւեալը. —

Լուրեր են շրջում նորից, թէ «Դրօշակները» մտադրութիւն ունեն վերսկսելու բովայնի գործողութիւնները Կ. Պօլսում և Անատոլի նահանգներում: Այդպիսի ձեռնարկներ կառաջանեն ծանր աղէտներ հայ դատի համար՝ աճեցնելով կառավարութեան կասկածներն ու խտուրթիւնները ժողովրդի անմեղ ամբոխի վրայ: Բացի դրանից Թիւրքիայի ամեն կողմ և մասնաւորապէս հայերի մէջ միահամուռ ահ ու սարսափ և զայրոյթ կայ այսպիսի պարսաւելի և յիմարտկան գործողութիւնների դէմ: Այսպիսի ընթացքի շնորհով վերջիվերջոյ հայերը Եւրօպայի աչքին պիտի կորցնեն իրանց բոլոր շահերն ու յարգանքը: Մինչդեռ Սուլթանն ու իր կառավարութիւնը վերջին կոտորածների դէպքերից ի վեր գործում են խոհանարարութեամբ և թող չեն տալիս հոսեցնել անմեղ արիւն, որը նրանք որոշած են անել սպագայում:

ԱՐՓԻԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

«Standard» անգլ. լրագրի Հոկտեմբեր մէկի համարում Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ սուլթանի յատուկ պատգամաւոր Ահմետ Զէյնէդդին փաշայի հետ կայացած մի համաձայնութեամբ՝ Տ. Բէլէկեան անուն անձը, նախորդ պատրիարք Իգմիրլեանի քարտուղար (!), այժմ Կ. Պօլս է գտնուում, գալով Եւրօպայից:

Մաշալա. Մուրատ բէյից յետոյ նոյն Զէյնէդդինի, «համոզիչ» խօսքով այժմ, ամեն տեսակ մեղայ գալով սուլթանի առաջ, դաւաճանութեան ու մատնութեան արհեստի բացարձակաբար ձեռնամուխ է եղել Տ. Բէլէկեանը: Հայ և Թիւրք դաւաճանների շարքը բացւել է, և շուտով պէտք է հանդիսատես լինենք թէ ինչպէս դրանք, սագերի շարքով, իրար ետեից պէտք է գնան իրանց վեհափառի կեղտոտ ոտքերը համբուրելու, մեղայ, մեղայ պողալով: Ո՞վ է այդ Բէլէկեանը: «Հնչակի» կատաղի թշնամիներից մէկը, ստորաբարշներից մէկը, Արփիար Արփիարեանի հաւատարիմ գործակիցն ու աջ բազուկը, որ արդէն առաջ գաղտնաբար պարապում էր այն արհեստով, որն այսօր ստանձնում է արդէն բացարձակաբար: Մաշալա. այդպիսով, ճանապարհ է բանում իր տէր ու վարպետ Արփիարեանի համար: Ճշմարտութիւնն ու իրականութիւնն ահա այդպէս է պէտք է երևան գայ կամաց-կամաց և այդպիսի մահացու ապտակներ հասցնեն մեր թշնամիներին, որոնք ամենքն էլ իրանց հերթը կունենան: Ստորաբարշներ, և դրանք գլու յանդգնում են, իրանց վատութիւնն ու լքութիւնը սքողելու համար՝ յարձակւել ազգին ներսւած գործիչների վրայ: Խեղճ ազգ, որ դեռ չէ կարողանում արփիարականութեան այդ զգեւելի ճգններին տրորել իր ոտքի տակ:

ՀՆԶԱԿԵԱՆ ԱՍՊԵՏԱԿՆԵՐ.

Եւրօպական թերթերին Կ. Պօլսից հաղորդում են որ ճանիկի կառավարիչը հեռագրում է Բ. Գոան, թէ Հնչակեան Կուսակցութեան պատկանող ասպատակային մի խումբ, բաղկացած երեսուն հոգուց, հալածւել է օսմանեան զօրքերի կողմից: Ասպատակներն ամբար զինւած են եղել մարթինի կարաբիններով, նրանց մէջ

նաև մի կին, զինւած, որը նոյնպէս մասնակցել է այն ընդհարման, որ տեղի է ունեցել խմբի և զինւորների մէջ: Կռիւր եղել է խիստ արիւնալի, երկու կողմից էլ շատերը սպանւել են: Զօրքերը աջողւել են ձերբակալել մի քանիսին, որոնց մէջ ասպատակային պարագլուխներից Յովսէփ: Երկրորդ պարագլուխը մի քանի ընկերներով աջողւել է ազատւել: Զարչամբայի գայմագամը հրահանգ ստացաւ զինւորական մի ջոկատով հետամուտ լինել փախտականներին և «անպատճառ» ձերբակալել:

ՅՈՅՆ ԱՍՊԵՏԱԿՆԵՐ.

Եւրօպական թերթերին հաղորդում են, որ Մանասիրի վալիի կողմից մեծ եպարգոսին սեպտ. 26-ից մի հեռագիր տեղեկացնում է, թէ Գիզատի (?) բռնակիչներից ոմանք և մերձակայ գիւղացիները, միանալով Յոյն ասպատակ մի խմբի հետ, խռովութիւններ են անում Տրիկալայի մօտերը: Մի հրահանգի համաձայն՝ հրամանատար Ռիզա բէյ և Ահմէդ Էֆենդի բազմաթիւ զօրքերի գլուխ անցած, մի զինւորական ջոկատ ևս Տրիկալայից հալածւել են խմբին: Տեղի են ունեցել յուսահատական կռիւներ, որոնց միջոցին ըսպանւել է Կրիքօփօլի ասպատակների պարագլուխը: Կռիւր դաշտում ընկել են ուրիշներ ևս: Մնացած խումբըն աջողւել է խոյս տալ, թողնելով ութսուն հրացան, վաթսուն արկղ հրացանի փամփուշտ և այլ ռազմավթեր:

Կուսակցութեան Գանձարանում շնորհակալութեամբ ստացւել են հետևեալ գումարները.

ԱՄԵՐԻԿԱ. — Լինի Հնչ. Մանաճիւղի միջոցով հանգանակւած է 74 զօլար հետևեալ անձերից. — Յ. Ավգ., Բերգ և Ժայռ 10-ական զօլ. Գերհատ, Ուրփուշ, Կեճէ, Մ. Կ., Գասո, Գ. Ս. և Լազ 5-ական զօլ. Լաօ 3 զօլ. Յ. Կ. Ս., 2էրբէզ և Սինա-մուտ 2 ական զօլ: Նոյն Մանաճիւղի Գանձարանը ստացւած է և տեղական այլ և այլ պէտքերի համար ծախսւած՝ 82 զօլ. 60 սէնտ:

ՆԻՒԵՐՔԻ. — Հնչ. Մանաճիւղի միջոցով Արփի 3 զօլ., Երկու եղբայրներից 2 տօլ. և Արայից 1 տօլ.:

ՌՈՒՄԵԼԻԱ. — Բուբարէշտի Հնչ. Մանաճիւղի միջոցով՝ Արարատ խմբից 11 ֆրանկ, Կայծեր տասնեակից և համակրելից 10-ական ֆր., Նշայից և Սարդից 6-ական ֆր., Մայսից 5 ֆր. և Սափրիչ հնգակից 2 ֆր.:

ԹԻՒՐԿԻԱ. — Զ. Բ. փոքր խմբից 2 անգլ. ոսկի: Դարձեալ նոյն խմբից 2 անգլ. ոսկի: Կ. քաղաքի Հնչ. Մանաճիւղը ստացած է՝ Սև հողեր 4-ից 56 լըշ., Աւսո Ա-ից 10 ֆր. Ծիծեռնակից 5 լըշ.:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].